

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԱՆՈՒԹՅԱՆ ՍԻՐՈ ՊՈԵԶԻԱՆ

Լ. Ա. Գալստյան

Պարույր Սեւակի քնարը ընթերցողին հմայում է մարդկային ապրումների բազմազանությամբ: Ժամանակաշրջանի իմաստը բանաստեղծն աշխատել է պարզել՝ ընդլայնելով մարդկային զգացմունքների սահմանները: Այդ մեծ ձգտումից էլ ծնվել են նրա բանաստեղծական հրաշքները, որոնք նշանավորել են հայ քնարերգության նոր, բարձրագույն աստիճանը:

Հետաքրքրություն են ներկայացնում Սեւակի մանկության եւ պատանության սիրո տաղերը: Աշխարհում յուրաքանչյուր անհատի հետ նորացող այս թեման հիմնական նյութ է դարձել բանաստեղծի պոեզիայում: Եվ ընդհանրապես, Սեւակը մեծ է նաեւ սիրով: Սիրերգությունը բանաստեղծի անհատականության դրսեւորումն է: Ճշմարտացիորեն Ա. Արիստակեսյանը գրում է. «Սերը Պ. Սեւակի պոեզիայում հենց սկզբից էլ եղել է... անհատական, կենսագրական արտացոլում»¹:

Պոետը հավատարիմ է մնացել իր հոգու ծայնին, եթե սիրել է՝ նվիրաբերվել է առանց մնացորդի: Դիմելով քնարական մտերմուհուն՝ բանաստեղծը հիացմունքով գրում է.

*Քեզնով է լցված մի մեծ մանկություն,
Երազներով լի մի պատմություն:*

Մանկության եւ պատանության սիրո անմեղ խլրտումների, «թաքուն» զգացմունքների մասին են պատմում «Ամնոռուկներ մանկությունից», «Պատմության ծաղիկներ» շարքերը, որոնք հիմնականում գրվել են 1946 թվականին, բայց տպագրվել են 1954 թվականին եւ տեղ են գտել «Սիրո ճանապարհ» ժողովածուում:

«Ամնոռուկներ մանկությունից» վերնագրի տակ պոետը զետեղել է վեց բանաստեղծություն, որոնցում մանկության վերհուշի միջոցով արտահայտել է իր մեծ սերը եւ հայրենիքի, եւ տան նկատմամբ.

*Եվ բացվում է իմ դեմ, իմ աչքերի առաջ
Իմ հայրենի գյուղը - այնտեղ ցածում:
Քնաթաթախ գյուղի տանիքներից ելած՝
Երդիկների ծուխն է հորանջում:*

Անսահման սերը հայրենի տան նկատմամբ կարծես հորդում է բանաստեղծական պատկերներում: Երբեմն էլ գառնարած մանուկը՝ որպես դպիր, արարում է հարազատ բնության հողաբույր ծայները՝ իբրեւ մանկության «ամնոռուկներից» մեկը: Հասուն տարիներին էլ բանաստեղծը խանդավառվել է մանուկ օրերի հաճույքներով: Մանկության թեման որոշակի բաժին է կազմում ինքներգության մոտիվով գրված բանաստեղծություններում: Շատ անգամ պոետի քնարական հերոսը երեւակայությամբ մանկանում է եւ մտնում հայրենի տուն, գնում ծննդավայրի ճամփաներով.

*Իմ օրրանն է հեռու մի գյուղակ,
Սապատ տանիքով ծխոտ մի հյուղակ,
Ու մանկությունն իմ ոչ ոք չի խաբել
Խաղալիքներով:*

Ռոմանտիկական ընկալումներով, մաքրությամբ են շնչում պոետի անցած մանկության բանաստեղծական պատկերները: Անցել են տարիներ, շատ հիշողություններ են խամրել, բայց մանկական սիրո զգացումները դարձել են գեղեցիկ հուշեր: Մեկ-մեկ գյուղում վառվում են ճրագները, մութը, լուսնից հալածվելով, իջնում է ցած, բայց դեռ շարունակվում էին մանկական խաղերը.

*Ինձ մի մթին իրիկուն է կարծես պատում,
Սոռաքել են եւ չեն հիշում շատ բան հիմա,
Բայց հիշում եմ՝ սիրում էի խաղալ «տուն-տուն»
Միայն քեզ հետ, ձեր տան բակում, մեր տան դիմաց:*

Շրջապատող երեւոյթներն էլ մասնակից են այդ խաղերին: Սիրելիի բակով հոսող առուն չարածի

¹ Ա. Արիստակեսյան, Պարույր Սեւակ, Ե. 1984թ., էջ 244-245:

անթիվ խաղեր է հորինում, քչքչում, կամ սիրելիի եղբոր հետ խաղալիս միշտ տանուլ է տալիս, որովհետեւ հմայված է նրանով:

«Բանաստեղծի սերը խորանալով,- գրում է գրականագետ Ա. Արիստակեսյանը,- սահմանները ընդլայնում է, իր մեջ է առնում կյանքն ամբողջությամբ, սերը հավասարվում է կյանքին, կյանքը դառնում է նույն սերը...: Նա լցված է սիրո ու տառապանքի, երջանկության ու նրա կորստի, անջատման ու սպասման... անընդմեջ փոխվող պատկերներով, որոնցով էլ հենց բանաստեղծն իմաստավորում է սերն ու սիրո աշխարհը, հաստատում մարդու անհատականության ու ներքին ինքնուրույնության ձգտումը»¹:

«Մեզ ստիպում են, որ խռով մնանք» բանաստեղծությունը սիրո տխուր մտաբերումների հետ բացահայտում է կենցաղային մանրամասներ: Սիրող պատանին ցավով է հիշում, որ երբեմն մեծերն են դառնացրել իրենց մանկական երազները, կռվել են միմյանց հետ եւ սաստել՝ «Չպետք է մեկտեղ խաղալ ու խոսել», որովհետեւ.

*Ամուր չի կապում հորթուկին նանը,
Ու պառավն ինքը քնում է շոգին,
Եվ անմիտ հորթուկը՝ այդ անպիտանը,
Գալիս է մտնում մեր ջրած այգին:
- Դառնանա՞ն պիտի մեր վարունգները,-
Խեթում է հայրս ու տեղ չի գտնում:*

Ամնիջական սիրո խոստովանություն են բանաստեղծության վերջին տողերը.

*Լավ չէ՞ դառնանա՞ն մեր վարունգները,
Քան թե ես ու դու դառնանա՞նք այսպես...*

Մանկության տարիների անպատասխան սիրո խոստովանություն է «Ա-խ, ես գիտեմ, չէիր սիրում» բանաստեղծությունը: Երեքնուկի թվերով ուրախ ու զոհ «Սիրեմ-սիրեմ» անվերջ խաղացող մանուկների գաղտնի զգացումները համոզիչ է պոետը բացահայտում բնության գույները ծուլելով պատանեկան ապրումներին.

*Ա-խ, ես գիտեմ, չէիր սիրում,
Հիմա գիտեմ ես անկասկած...
Վազվրդում ենք մենք սեզերում,
Խոտերի մեջ խոնավ ու թաց:
Հետո նստում ուրախ ու զոհ,
Երեքնուկի թուփ ենք քաղում
Եվ այդ ժամոթ երեքնուկով
«Սիրեմ-սիրեմ» անվերջ խաղում:*

Վշտացած պատանու հոգու խռովքի պատճառը անարձագանք մնացած սերն է: Ահա թե ինչու անմիջական մտատանջությամբ դժգոհում է.

*Չէ՞, ինձ չէիր, չէիր սիրում...
Թե չէ - ի՞նչ է, բա՞րդ էր այնքան
Գտնել երեք անուններում
Իմ անունը գեթ մի անգամ:*

Ու քանի որ ինչ-որ չգրված օրենքով սերը տառապանք է, իսկ երջանկությունը՝ պատրանք, ահա թե ինչու «տխուր մտքերի» կասկածը արձագանքում է մերժումի ցավը.

*Անուններում երեք հոգու
Եվ դու՛ կամ միշտ, եւ ե՛ս միշտ կամ:
Քո անունն եմ ես միշտ պոկում,
Իսկ դու իմը՝ ո՛չ մի անգամ:*

- Առանց քեզ, ա-խ իմ սիրտն է մրսում,- խոստովանում է պատանին, որ կարծես ինքն էլ իրենից թաքում:

Բանաստեղծի պատանեկան սիրերգությունն արտահայտում է նրա հոգեկան ելեւեղները, բացահայտում հետաքրքրությունների բազմազանությունը: Այդ մաքուր զգացմունքների ակունքը ինքնանվիրաբե-

¹ Ա. Արիստակեսյան, Պարույր Սեւակ, Ե. 1984թ., էջ 251:

րումն է, ներքին մաքառումը, տագնապած հոգու տարփանքը, ցանկանում է այրվել երազած էակի ջերմությամբ:

«Պատանության ծաղիկներ» շարքում ամփոփված են ինը բանաստեղծություն, որոնք վկայում են պատանեկան անմիջական զգացումների բազմազանությունը: Կյանքը պատանու առջև բացում է իր գաղտնիքները:

*Ես կոչիր-կույր էի մինչև այդ կյանքում,
ու բացվել էին աչքերըս արդեն.
Գարնան գիժ քամին, քեզանից թաքուն,
Քո կուրծքն էր բացում ու փակում իմ դեմ:*

Օդում արծարծված գարնանային «տաք ու պաղ» շունչը կրկին խռովել է պոետի հոգին: Իր կանչերում նա արտահայտում է հոգու տվայտանքը: Դիմելով քնարական մտերմուհուն՝ գրում է.

*Սակայն դու իմ կանչը չես լսում.
- Չե՞ս լսում, թե՞ քնքուշ ստում ես...
Ա՛խ, ինչո՞ւ մեծացար այդպես շուտ,
Որ այդպես ո՛ւշ - ո՛ւշ գաս մեր տունը...*

Պոետը հավատարիմ է մնացել իր հոգու ծայրին: Թաքուն սիրո տվայտանքը («Իմ արցունքները թեպետ չեն հոսում») պատանի պոետը բացահայտում է համոզիչ պատկերներով: Կավաշեն մի պատ է բաժանում նրան սիրած էակից, մինչդեռ սրտից սիրտ՝ պարիսպ է ահագին.

Անցել են տարիներ, «հիմա ողջն ասես մի հեքիաթ լինի», - վերհիշում է պոետը: Նրա խռովքի պատճառը չարձագանքված պատանեկան սերն է.

*Շա՛տ ցուր է հոսել, անցել են արդեն տարիներ քանի:
Մեծ քաղաքների մայթերում արդեն ես նույնիսկ հիմա,
Երբ հանդիպում եմ քեզ նման մեկին միշտ շուտ եմ գալիս,
Միշտ ետ եմ դառնում արեւը սիրող այն ծաղկի նման:*

Սերը Սեւակի պոեզիայում ունեցել է անհատական, կենսագրական արտացոլում: Բանաստեղծը երգել է իր իսկ սիրուց ծնված ապրումները, երգել է իր «ես»-ի անունով, սիրելիի առջև անկեղծորեն բացել է հոգին: Ավելի ուշ շրջանում գրած «Նույն հասցեով» շարքում պոետի անհատականությունը կարծես մաքրվում է կենցաղային նկարագրություններից, եւ նա համընդհանուր բովանդակություն է տալիս իր երգերին: «...Ինչը մարդուն հարազատացնում է մարդկությանը, մեկ անհատի քնարական հերոսի ապրածի գրում է գրականագետ Արիստակեսյանը:

Ժամանակակից հայ քնարերգության մեջ մանկության հուշը միանգամայն տարբեր արձագանք է ծնում: Բանաստեղծներից ոմանց համար մանկության հուշը կյանքից հեռանալու երանավետ ափ է, ոմանց համար՝ սփոփելու ժամանց, իսկ Սեւակի համար՝ պոեզիայի զարգացման օրինաչափ ճանապարհ:

Галстян Л. А. - Детская и юношеская лирика Паруйра Севака - Обсуждая тему детства П. Севака, мы анализировали душевную эволюцию поэта и показали переход к большой поэзии.

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

(ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՃՇՏՈՒՄՆԵՐ)

Յու. Գ. Յովհաննիսյան

Ամենից առաջ խոսքը վերաբերում է Վահան Տերյանի «Երկիր Նաիրի» շարքի «Մշուշի միջից,- տեսիլ դյուբական» տողով սկսվող բանաստեղծությանը, որն առաջին անգամ «Երկիր Նաիրի» ընդհանուր խորագրով «Դու հպարտ չես, իմ հայրենիք» եւ «Բարակիրան մահրուհին իմ ժպտաց» բանաստեղծությունների հետ միասին տպագրվել է 1915 թվականին «Մշակ» թերթի հունիսի 7-ի համարում (թիվ 122): Այս բանաստեղծությունը Բաքվի «Նվեր որբերին» թերթին է ուղարկվել շատ վաղուց՝ 1915թ. հունվարի 7-ին, Պետրոգրադից, եւ պետք է տպագրվեր նույն ամսի սկզբներին, բայց ինչ-ինչ պատճառով տպագրվել է տարեվերջին՝ դեկտեմբերի 9-ին, «Քեզ կըմնա միշտ օտար» բանաստեղծության հետ միասին, համարակալված հռոմեական թվանշանով I, II, դարձյալ «Երկիր Նաիրի շարքից» խորագրով:

«Նվեր որբերին» թերթի հրատարակության մախաձեռնությունը պատկանում է Բաքվի «Արեւ»-ի խմբագրության մոտ կանգնած մի խումբ մտավորականների, որոնք որոշում են հրատարակել միօրյա թերթ՝ նվիրված հայ որբերին: Ընտրվում է խմբագրական հատուկ մարմին, որի մեջ մտնում են Սիմոն Յակոբյանը, Դավիթ Անանունը (Տեր-Դանիելյան) եւ ուրիշներ: Սկզբում որոշում են թերթը հրատարակել տեղի մտավորականների ուժերով, բայց «նկատելով, որ սա լինելու է ի նպաստ հայ որբերի, հետեւաբար գործը ընդհանուրի սեփականություն համարելով», աշխատակցելու են հրավիրում «հայ գրագետներին անխտիր»: Իսկ թերթից ստացված ամբողջ գումարը պետք է հատկացվեր հայ որբ գաղթականներին: «Նվեր որբերին» թերթին սիրահոռար կերպով իրենց մասնակցությունն են բերում Վահան Տերյանը, Յովհաննես Յովհաննիսյանը, բժիշկ Լեւոն Աթաբեկյանը, Կարա-Մուրզան եւ ուրիշներ:

Հայտնի է, որ Տերյանն առաջին անգամ չէ առանց դրամական վարձատրության, այսպես ասած, բարեգործական նպատակով աշխատակցում հայկական մամուլին: Հիշենք, թե ինչպես դեռ 1909 թվականին «Հացի կտոր գեթունցուն» գրական ժողովածուում, որը հրատարակվել է Նոր Նախիջեւանում, Գրիգոր Չալխուշյանի խմբագրությամբ «ի նպաստ սովյալ գեթունցիների», Տերյանը «Ոսկի հեքիաթ» գրքից» խորագրի տակ տպագրել է երեք բանաստեղծություն՝ «Մեղմիվ փոկեց քնքուշ մութ» (էջ 121), «Չըգիտեմ այս տխուր աշխարհում» (էջ 122) եւ «Դու չբացել ես» (էջ 123): Իսկ 1915-ին «Չիթենի» գրական ժողովածուում, որը հրատարակվել է Թիֆլիսում, «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանի մախաձեռնությամբ «հօգուտ պատերազմից վնասվածների», Տերյանը տպագրել է հինգ բանաստեղծություն՝ «Մանուկներ ենք որբ» (հետագայում վերագրել է «Մենք բոլորս, բոլորս» (էջ 99), «Մանուկներ ենք մենք երկու խեղճ» (էջ 99), «Եթե սեր չըկա - ինչի՞ համար» (էջ 100), «Անգարդ իմ օրվան, անտուն իմ կյանքին» (էջ 100) եւ «Գնչու» (հետագայում վերագրել է «Նույնն է հասցեդ հնամյա» (էջ 100-101):

Թեեւ «Մշուշի միջից,- տեսիլ դյուբական»-ը «Նվեր որբերին» թերթում տպագրվել է ուղարկվելուց ավելի քան 11, իսկ «Մշակում»՝ տպագրվելուց 6 ամիս հետո, բայց, մեր կարծիքով, այն ուշ տպագրվելու պատճառով ակամա դարձել է վերջին տարբերակ: Ոչ մի կասկած չի կարող լինել, որ հինգ ամիս առաջ՝ «Մշակ», իսկ վեց ամիս հետո «Նվեր որբերին» թերթերում տպագրված բանաստեղծությունն անցած 11 ամիսների ընթացքում Տերյանը, որ սերտ մամուլագրություն ուներ այդ ժամանակ Բաքվում ապրող իր մտերիմ ընկերների՝ Յուլակ Խանգադյանի եւ Դավիթ Անանունի հետ (դժբախտաբար նրանց այդ ամիսների ոչ բոլոր նամակներն են պահպանվել), թողներ տպագրվել նախնական բնագիրը:

Մեզ թվում է, թե «Մշակ» եւ «Նվեր որբերին» թերթերին ուղարկված բնագիրը նույնն է եղել, պարզապես «Նվեր որբերին» թերթի տպագրությունը ուշանալու պատճառով, բանաստեղծը հույսը կտրել էր նրանից եւ նույն բնագիրը հանձնել «Մշակին»: Ոչ մի կասկած չի կարող լինել, որ «Մշակում» տպագրվելուց հետո է Տերյանը հիմնովին փոխել ու վերամշակել վերջին տունը, այլապես, կրկնում եմ՝ նա չէր հանդուրժի, որ մշակված բանաստեղծության բնագիրը տպագրվելուց վեց ամիս հետո տպագրվեր նրա նախնական տարբերակը, որ «Նվեր որբերին» է ուղարկվել 11 ամիս առաջ:

Ավելացնենք նաեւ, որ 1915թ. դեկտեմբերի սկզբին Տերյանը Մոսկվայի Հայկական կոմիտեի նախագահ Ստեփան Մամիկոնյանի հանձնարարությամբ եղել է Կովկասում: Հայտնի է, որ Տերյանը Վանի հերոսամարտի մասին ուզում էր պոեմ գրել եւ հնարավորություն չունենալով անձամբ լինելու Վանում՝ ցանկանում էր այցելել հայկական որբանոցները եւ նյութեր հավաքել իր գրելիք պոեմի համար: Բանաստեղծը լինում է երեւանում: Այստեղ նա այցելում է Ցարսկայա փողոցի վրա գտնվող որբանոցը, ուր ապաստան էին գտել Վանից գաղթած երեխաներ: Նրա խնդրանքով երեխաները շարադրություններ են գրում իրենց կյանքի եւ Վանի պաշտպանության մասին: Այդ շարադրություններն այժմ պահվում են Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի Վահան Տերյանի ֆոնդում (գործ թիվ 45):

Եթե «Մշակի» տարբերակը լինել վերջնական բնագիրը, ապա Պետրոգրադի համեմատությամբ, ավելի մոտիկ գտնվելով Բաքվին, Տերյանը Թիֆլիսից ու երեւանից կարող էր որեւէ ձեւով կապ պահպա-